Սամվել Լաճիկյան. Մոգական ռեալիզմի վարպետը



Գեղանկարչական աշխատանքներ կան, որոնք դիտելուց, նույնիսկ հավանելուց մի քանի օր անց իսպառ մոռացվում են: Լինում են նաև նկարիչներ, որոնց ստեղծագործություններն այնպես են դաջվում հիշողությանդ մեջ, որ ոչ թե օրեր ու ամիսներ, այլ տարիներ անց էլ մտովի անկարող ես լինում բաժանվել դրանցից: Ավելին՝ անվերջ փնտրում ես գործերի հեղինակի ստորագրությունը:

Նման նկարիչներից է Սամվել Լաճիկյանը, որը 20 տարի ԱՄՆ-ում բնակվելուց հետո կրկին իր հայրենի Գյումրի վերադարձավ այն համոզումով, որ արվեստի ճշմարիտ գործեր օտար եզերքներում չեն կարող ստեղծվել: «Դրսում ինչ նկարել եմ, արմատները դարձյալ այստեղ՝ Հայաստանում են: Սիրել ու սիրում եմ ծննդավայրս՝ Գյումրին,– ասում է նկարիչն ու ավելացնում,- ինձ համար այն շարունակում է մնալ Սանդուխտ մամիս պատմած Արեգնազանի հեքիաթի կախարդական աշխարհը՝ իր Անդաս թագավորով ու կենսախինդ մարդկանցով»:

Նկարչի մուտքը մեծ արվեստի աշխարհ նշանավորվեց 1981 թվականին՝ «Նատյուրմորտ մոմով» փոքրաչափ նկարով, որը ցուցադրվեց Մոսկվայում կայացած Ջրանկարի համամիութենական VI ցուցահանդեսում: Դեռ Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտում սովորելու տարիներին ջրաներկով արված իր աշխատանքներով նա մասնակցեց նաև միջազգային մի շարք ցուցահանդեսների՝ կազմակերպված ջրանկարչական զորեղ ավանդույթներով հարուստ Ֆինլանդիայում և Շվեդիայում: Գրաֆիկական այդ քմահաճ նյութի գաղտնիքներին վիրտուոզ տիրապետող երիտասարդ նկարիչը թափանցիկ գույներով սկսեց երփնագրել իր հայրենի քաղաքն ու այնտեղ ապրող մարդկանց: 1987թ. նրա վրձնած քաղաքային բնանկարները («Աշուն. Լենինական» և «Ձմեռ. Լենինական») այդ հայաբույր ու հնաշունչ ոստանի քնարական գողտրիկ պատումները դարձան՝ արված սիրով և անհուն ներշնչանքով:

Սամվելը նկարների վրա աշխատում է դանդաղ և արտասովոր ջանադրությամբ: «Հիշում եմ,– պատմում է նկարիչը,– սեպտեմբեր ամիսն էր: Ուզեցի քաղաքիս աշնանային մի տեսարան վրձնել, որ բացվում էր մեր պատշգամբից: Այնքան երկարեց գործը, որ մի առավոտ նույն տեսարանը պատվեց ձյան հաստ շերտով: Այդպես ծնունդ առավ իմ «Զմեռ. Լենինական» նկարս»:

Ճիշտ է, Սամվել Լաճիկյանը ստեղծագործում է գեղանկարչական բոլոր ժանրերով՝ բնանկար, նատյուրմորտ, կոմպոզիցիա և այլն, դիմանկարն անկասկած առաջնային նշանակություն ունի նրա ստեղծագործության մեջ: Հատկապես դիմանկարներում ի հայտ եկան նրա գծի վարպետությունն ու գույնի հետ այն ներդաշնակելու հմտությունը: Արվեստաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն



Զարյանը, որն աչքի էր ընկնում տաղանդներ հայտնաբերելու ու նրանց ապագան անվրեպ գուշակելու նախանձելի կարողությամբ, անմիջապես նկատեց նկարչին՝ գրելով հետևյալը. «Դիմանկարի ժանրում Սամվել Լաճիկյանի հաջողությունները բացարձակ են: Նմանությունը, բնավորության բացահայտումը, հոգեկան գծերի յուրահատկությունը,– ահա ի՛նչ է բնորոշ նրա դիմանկարներին: Նկարից մեզ է նայում ոչ թե ընդհանրապես մի մարդ, այլ ա՛յս, միայն ա՛յս մարդը»:

Որպես կանոն, նկարիչը չեզոք ֆոն է ընտրում՝ չխաթարելու համար բնորդի կերպարի ամբողջական ընկալումը: Հաճախ է, իհարկե, այդ բնորդների մեջ հայտնվում նաև ինքը՝ հեղինակը: Տարբեր տարիների ինքնանկարներն արտացոլում են արվեստագետի հոգեկան վիճակները ստեղծագործական պրոցեսի տվյալ պահին:

…1988թ. դեկտեմբերյան երկրաշարժը ոչ միայն ավերակների վերածեց հնամյա Գյումրին, այլև տակնուվրա արեց նրա ստեղծագործ որդիների ներաշխարհը: Սամվել Լաճիկյանի կենսագրությունը ևս ակամա բաժանվեց մինչերկրաշարժյանի և հետերկրաշարժյանի, որոնք միմյանցից էականորեն տարբերվում են ոչ միայն գուներանգներով ու կատարման ոճով, այլև գեղարվեստական մտածողությամբ:

Ի դեպ՝ աղետից հետո երկար ժամանակ նա չնկարեց. լծվել էր իր ղեկավարած Մերկուրովի անվան մանկական գեղարվեստական դպրոցի վերականգնման աշխատանքներին՝ առաջնահերթ համարելով մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության գործը: Միայն 1992թ. վերսկսեց իր գեղարվեստական գործունեությունը՝ պահանջ զգալով արդեն ավելի պինդ ու թանձր նյութի: Յուղաներկի միջոցով նա ավելի լավ պիտի կարողանար արտահայտել իր հոգում կուտակված ապրումները:

Սամվելը, սակայն, երկրաշարժի սարսռազդու տեսարաններ չպատկերեց, չգնաց էժան էֆեկտների ճանապարհով: Դարձյալ շարունակեց նատյուրմորտներ նկարել, որոնք արդեն ձեռք բերեցին խորհրդանշական ու այլաբանական իմաստ: Նկարչի ասելիքն ավելի բյուրեղացավ, և հին նկարներում առկա հոգեբանական թաքուն շերտերը միանգամից դուրս ժայթքեցին: Ճիշտ է, ավելացան նաև մուգ գույները, բայց դրանք կարծես ավելի ընդգծեցին լույսի խորհուրդն ու դրա կենսահաստատ ուժը:

Արվեստասերները տպավորվեցին հատկապես նրա «Հայոց գորգապատում» նկարաշարով՝ բաղկացած ինը կտավներից: Դրանցից յուրաքանչյուրում պատկերված ազգային գորգի կամ կարպետի, դրանց զանազան ձևերի ու ծավալների մեջ նկարիչը տեսավ մարդկային կերպարներ: Ծալքերը մերթ ասպետի կերպարանք ընդունեցին («Ասպետ»), մերթ վերածվեցին ծեր կնոջ հիշեցնող «Հուսո հրեշտակի», մերթ էլ հառնեցին մեր առջև որպես «Գյումրու Տիրամայր»: Վերջինիս մեջ, օրինակ, արվեստասերի հայացքի առջև մանկանը գրկած Աստվածամայրն է՝ շրջապատված մետաղյա գալարներով: Դրանք ցավեցնելու չափ սեղմում են նրա իրանը, ապա վեր բարձրանալով վերածվում սրբապսակի:

Մեր ժամանակների մեծագույն վարպետներից մեկը՝ գեղանկարիչ-ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը, այդ աշխատանքները «հայտնություն» համարեց: «Նատյուրմորտներ հայ կերպարվեստում շատ են եղել,– գրեց նա,- դրանցում, սակայն, մեր կարպետը դարեր շարունակ լուռ ֆոն է եղել՝ երբեմն ակտիվ, երբեմն պասիվ: Բայց Սամվել Լաճիկյանի մոտ նույն կարպետը ոգի է առել, կյանք ստացել: Կարծում եմ՝ դրանք նոր խոսք են ոչ միայն երիտասարդ արվեստագետի ստեղծագործության մեջ, այլև մեր արվեստում ընդհանրապես»:

Իսկապես, խորապես տպավորում են նկարչի քննախույզ հայացքն ու մոտեցումը պատկերվող առարկաներին ու երևույթներին: Իր ռեալիզմով նա կարող է նույնիսկ մոլորության մեջ գցել դիտողներին՝ դառնալով «մոգական ռեալիզմի» ոչ միայն պարզ հետևորդը, այլև վառ ներկայացուցիչը: Չնայած նորարարական բազում հոսանքներին՝ Սամվելը սկզբից ևեթ պահպանեց հարգանքը դասական արվեստի նկատմամբ: Հնի մեջ, սակայն, նա տեսավ նորը, սովորականի մեջ փնտրեց անսովորը: Շատ-շատերը տպավորվեցին կատարելության հասնող նրա ոճով և թղթի մակերեսի բծախնդիր մշակվածությամբ :

Ոչ միայն բազմաժանր, այլև բազմաոճ նկարիչ է Սամվել Լաճիկյանը: «Իմ ոչ մի նկար մյուսին նման չէ,– ասում է նա,– նույնիսկ եթե որևէ ոճում ես նշանակալի հաջողության եմ հասնում, հաջորդ էտապում փոխում եմ այն»: Այսպես. գորգանկարներից հետո իր գործունեության ամերիկյան շրջանում նա անցում կատարեց «Հայկական մանրանկարչություն» պայմանական անունով նկարաշարին՝ հենված հատկապես կիլիկյան մանրանկարչության գեղարվեստական ավանդույթների վրա: Դրանք խառը տեխնիկայով արված աշխատանքներ են, որոնցում նորովի են մեկնաբանված ավետարանական հայտնի սյուժեները («Ծնունդ», «Մուտք Երուսաղեմ», «Խաչելություն» և այլն):

Քչերը գիտեն թերևս, որ Լաճիկյանի՝ չափսերով ամենամեծ աշխատանքներից մեկը՝ «Խորհրդավոր ընթրիքը», զարդարել է համաշխարհային փոփ աստղ Մայքլ Ջեքսոնի բնակարանը՝ լինելով նրա ամենասիրած գործերից մեկը:

Չմոռանանք նշել Սամվել Լաճիկյանի գործունեության նաև այլ ոլորտների մասին՝ գրքանկարչություն և որմնանկարչություն: Առաջինի ասպարեզում նա մեկ

տասնյակից ավելի մանկական գրքերի նկարազարդումների հեղինակ է: Ինչ վերաբերում է երկրորդին, ապա նա Գյումրի քաղաքում մի քանի որմնանկար ունի տարբեր մանկապարտեզների շենքերում:

Տասնամյակների ընդմիջումից հետո վերադառնալով ծննդավայր՝ ՀՀ վաստակավոր նկարիչ Սամվել Լաճիկյանը ոչ միայն շարունակում է երկնել ճշմարիտ արվեստի գործեր, այլև տեղի «Վարդուհի» արվեստի դպրոցում իր փորձն ու գիտելիքներն է հաղորդում գյումրեցի փոքրիկներին: Այդտեղ էլ վերջերս նա կազմակերպեց «20 տարի անց» հոբելյանական ցուցահանդեսը, որի առիթով պարգևատրվեց ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով և Գյումրու քաղաքապետարանի Ոսկյա հուշամեդալով:

Լևոն Լաճիկյան